

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հունվարի 3-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Թադեոս աբեղ. Զիրեկյանցը:

* * *

Հունվարի 5-ին, երեքշաբթի.—Ճրագալոյց Ծննդեան և Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել վրդ. Աջապահյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Հունվարի 6-ին, չորեքշաբթի.—Տօն Ծննդեան և Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, օրվա մեծ տոնի առիթով պատարագ մատուցեց գերշ. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը:

Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվեց ջրօրհնյաց արարողություն:

* * *

Հունվարի 7-ին, հինգշաբթի.—Յիշատակ մեռելոց:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Ստեփանոս քհն. Մելիքյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն՝ «Վասն յամօրէն ննջեցելոց»:

* * *

Հունվարի 10-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Արտակ ավ. քհն. Սիմոնյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Հունվարի 13-ին, չորեքշաբթի.—Տօն անուանակոչութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Տիրայր քհն. Գըլըճյանը:

* * *

Հունվարի 17-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբդ. Միրզախանյանը:

* * *

Հունվարի 24-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել վրդ. Աջապահյանը:

* * *

Հունվարի 31-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Մամիկոն աբդ. Քիլեճյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Փետրվարի 6-ին, շաբաթ.—Այսօր Ս. Ծողակաթ եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել վրդ. Աջապահյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

* * *

Փետրվարի 7-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Թադեոս աբդ. Զիրեկյանցը:

* * *

Փետրվարի 14-ին, կիրակի.—ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ: Տօն քառասնօրեայ գալստեանն Քրիստոսի ի Տաճարն:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել վրդ. Աջապահյանը և «Հայր մեր»-ից առաջ օրվա խորհրդի մասին քարոզ խոսեց:

* * *

Փետրվարի 16-ին, երեքշաբթի.—Սրբոց Ղևոնդեանց քահանայիցն:

Այսօր Ս. Գայանե եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել վրդ. Աջապահյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* * *

Փետրվարի 18-ին, հինգշաբթի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ի ոգեկոչումն Սրբոց Վարդանանց հիշատակի, ս. պատարագ մատուցեց գերշ. Տ. Անանիա եպս. Արաբաջյանը:

Հավարտ ս. պատարագի բովանդակալից քարոզ խոսեց սրբազան հայրը, ապա հոգևորականաց մասնակցությամբ կատարվեց «Հայրապետական մաղթանք»:

Ս. պատարագի ավարտից հետո հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում կայացավ գրական-գեղարվեստական հանդիսություն՝ նվիրված Սրբոց Վարդանանց հիշատակին: Համերգին իրենց մասնակցությունը բերեցին նաև Ս. Էջմիածնին կից «Ս. Մարիամ Աստվածածին» կիրակնօրյա վարժարանի սաները:

* * *

Փետրվարի 20-ին, շաբաթ.—Կոստանդնուպոլսոյ Ս. Ծողովոյն՝ հարիւր յիսուն Հայրապետացն (381 թ.):

Այսօր Ս. Ծողակաթ եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբղ. Միրզախանյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* * *

Փետրվարի 21-ին, կիրակի.—Բուն Բարեկենդան:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Խորեն քհն. Մարուքյանը: «Հայր մեր»-ից առաջ Քարոզ խոսեց Տ. Միքայել վրդ. Աջապահյանը:

* * *

Փետրվարի 27-ին, շաբաթ.—Սրբոյն Թէոդորոսի զօրավարին:

Այսօր Ս. Գայանե եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Հարություն քհն. Դարբինյանը: «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց Տ. Վազգեն աբղ. Միրզախանյանը:

* * *

Փետրվարի 28-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Ստեփանոս քհն. Մելիքյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը:

Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվեց հոգեհանգստյան պաշտոն՝ նվիրված Լուսինե Զաքարյանին:

* * *

Մարտի 6-ին, շաբաթ.—Սրբոցն Կիւրղի Երուսաղէմայ Հայրապետին, և միւս Կիւրղի եպիսկոպոսին, և մօրն նորա Աննայի:

Այսօր Ս. Ծողակաթ եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբղ. Միրզախանյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Տ. Միքայել վրդ. Աջապահյանը:

* * *

Մարտի 7-ին, կիրակի.—(Անառակի):

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Տիրայր քհն. Գըլըճյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց գերշ. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

* * *

Մարտի 13-ին, շաբաթ.—Սրբոցն Յովհաննու Երուսաղէմայ հայրապետին, և հայրապետին մերոյ Յովհաննու Օձնեցւոյն, և վարդապետացն մերոց՝ Յովհաննու Որոտնեցւոյն և Գրիգորի Տաթևացւոյն:

Այսօր Ս. Գայանե եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Մամիկոն աբղ. Քիլեճյանը: «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց Տ. Միքայել վրդ. Աջապահյանը:

* * *

Մարտի 14-ին, կիրակի.— (Տնտեսին):

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Կոմիտաս քհն. Հարությունյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Տ. Թադեոս աբղ. Ջիրեկյանցը:

* * *

Մարտի 20-ին, շաբաթ.—Սրբոց Մանկանցն քառասնից, որք ի Սեբաստիա կատարեցան:

Այսօր Ս. Աստվածածին եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Հովսեփ ավ. քհն. Հակոբյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Տ. Մամիկոն աբղ. Քիլեճյանը:

* * *

Մարտի 21-ին, կիրակի.—(Դատաւորին):

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Միռոն վրդ. Ազնիկյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող գերշ. Տ. Տաթև արքեպս. Սարգիսյանը:

* * *

Մարտի 27-ին, շաբաթ.—Տօն է Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ սուկալի չարչարանացն և մտին ի Վիրապն:

Այսօր Մայր տաճարում, Իջման ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբղ. Միրզախանյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

* * *

Մարտի 28-ին, կիրակի.—(Գալստեան):

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Խաչատուր ավ. քհն. Ֆրանկյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Տ. Եզնիկ ծ. վրդ. Պետրոսյանը: